*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի*
*2021թ. փետրվարի 25-ի թիվ 52-Ա որոշման*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ**

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

2021

| | |
|---|---|
| **Հաշվեքննության հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. մայիսի 14-ի թիվ 11/3 որոշում |
| **Հաշվեքննության օբյեկտը** | ՀՀ բնապահպանության նախարարություն |
| **Հաշվեքննության առարկան** | ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը |
| **Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ |
| **Հաշվեքննության կատարման ժամկետը** | 2019թ. մայիսի 22-ից մինչև 2021թ. փետրվարի 26-ը ներառյալ |
| **Հաշվեքննության մեթոդաբանությունը** | Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկման և վերակատարման ընթացակարգերը |
| **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում** | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը: |
| **Ստուգման հիմքը** | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. հունիսի 17-ի թիվ 13/1 որոշում |
| **Ստուգման օբյեկտը** | ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում |
| **Ստուգման առարկան** | ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը |
| **Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ: |
| **Ստուգման կատարման ժամկետը** | 2019 թվականի հունիսի 24-ից մինչև 2021թ. փետրվարի 26-ը ներառյալ: |
| **Ստուգման մեթոդաբանությունը** | Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննման, դիտարկման, հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկման և վերակատարման ընթացակարգերը: |

# I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ իրականացված ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

## *Հաշվեքննողի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսատնտեսական գործունեության՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, համաձայն: Մենք հետևեցինք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսատնտեսական գործունեության իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ անհամապատասխանության հետևանքով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացի էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքի հիմնավորման համար:

## *Ոչ լիարժեք եզրահանգման հիմք*

Հաշվեքննությամբ պարզվել է, որ՝

ա/ ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացված ֆինանսատնտեսական գործունեությունում առկա են անհամապատասխանություններ ՀՀ օրենսդրության պահանջների հետ, մասնավորապես՝ 2017 և 2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի հավելված 2-ով (Ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման ժամանակացույց) սահմանվել է ցուցանիշ՝ անտառախախտումների հայտնաբերում (թիվ), համապատասխանաբար՝ 2017թ.-ին՝ 700, 2018թ.-ին՝ 700, սակայն 2017 թվականին արձանագրվել է 243 ակտ՝ 1823 ծառի մասով, 2018 թվականին արձանագրվել է 278 ակտ՝ 3072 ծառի մասով:

Ըստ էության ստացվում է, որ դրամաշնորհի պայմնագրերով սահմանված թիվը վերաբերում է անտառխախտման հայտնաբերման դեպքում կազմված արձանագրությունների թվին, այլ ոչ թե՝ իրավախախտման արդյունքում ապօրինի հատված ծառերի քանակին:

բ/ 2018թ.-ի հունվարի 23-ին բնապահպանության նախարարության, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակ (երկուսը միասին հանդես են եկել որպես Նվիրաբերող) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (նվիրաբերությունը ստացող) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը պետք է տրամադրվեր ընդհանուր 2300 խմ վառելափայտ՝ 11,799.2 հազ. դրամ արժեքով: Մինչդեռ՝ ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2018թ.-ի փետրվար, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում տրամադրվել է 1637 խմ վառելափայտ՝ 8,397.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Ինչպես նաև, Պայմանագրի փոփոխությամբ տրակտորի և փայտածուխի արտադրամասի փոխարեն ձեռք է բերվել Տոյոտա ԼԿ պռադո 4.0լ մակնիշի ավտոմեքենա:

գ/ 25.11.2004թ.-ի 1933-Ն որոշմամբ հաստատված՝ հատման գծով բնափայտի մթերման տարեկան նորմայի (հաշվարկային հատատեղի) հաշվարկման և հաստատման կարգի 7-րդ կետի համաձայն՝ բնափայտի մթերման տարեկան նորման (հաշվարկային հատատեղ) սահմանելու համար հիմք են հանդիսանում՝ անտառաշինական նախագծերի հիման վրա կազմված անտառների կառավարման պլանները, անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում՝ մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունները և եզրակացությունները, անտառների պետական հաշվառման և գույքագրման տվյալները: ՊՈԱԿ-ի տարեկան առաջադրանքը մասնագիտական հանձնաժողովների կողմից հաստատվել և տարվա ընթացքում ենթարկվել է մի քանի փոփոխությունների: 2017թ.-ին անտառահատման տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է 10,780.0 խմ, այնուհետև փոփոխությունների արդյունքում ծավալը ավելացել և տարվա վերջին կազմել է 25,181.0 խմ: 2018թ.-ին տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է՝ 17,036.0 խմ, որը ավելացել և տարվա վերջին կազմել է 42,757.0 խմ:

դ/ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման համաձայն՝ բնափայտ մթերելիս անտառնտնտեսությունները իրավասու են կնքելու 2 տիպի պայմանագիր՝ անտառատնտեսական աշխատանքների կատարման և ծառուտի առուվաճառքի, մինչդեռ ինքնապատրաստման եղանակով փայտանյութի վաճառքի պայմանագրեր կնքելը սահմանված չէ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ:

2017 թվականի ընթացքում չպահպանելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման դրույթները ընդհանուր առմամբ մթերվել է 30,111.0 խմ փայտանյութ:

ե/ Չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի դրույթները:

գ/ Չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 06.05.2013թ.-ի թիվ 80-Ն հրամանով հաստատված պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգի 71-րդ կետի դրույթները:

Հստակ չէ թե իրականում անտառահատման տոմսերում նշվածը վառելափայտ է (հատման եղանակը՝ թափուկ, օգտագործման եղանակը՝ թափուկ, հատատեղի հաշվեգնահատման ցուցակներում թվարկված են ծառեր, բների հաստությունով, տեսակով և այլն), որի իրացման դեպքում պետք է վաճառք իրականացվի, թե՝ տվյալ ծավալները իրականում թափուկ էին, որոնց համար տրամադրվել են թափուկ փայտանյութի օգտագործման տոմսեր:

է/ Որոշ դեպքերում անտառահատման տոմսերում չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված՝ պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի 14-րդ կետի 4 և 7-րդ ենթակետի դրույթները:

ը/ Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1072-Ն որոշմամբ հաստատված՝ հատատեղերի հատկացման և տեղազննման կարգի 19-րդ կետի դրույթները, որի համաձայն՝ թերհատների շահագործումն իրականացվում է կազմակերպության որոշմամբ՝ անտառահատման տոմսի ժամկետի երկարաձգման միջոցով:

թ/ Չեն պահպանվել ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ տարածքային կառավարման նախարարների՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի համատեղ հրամանի դրույթները, որով սահմանվել է «Ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի» ցանկը:

ժ/ Արծվաբերդի, Գուգարքի, Եղեգնուտի, Նոյեմբերյանի անտառտնտեսություններ ընտրանքային իրականացված այցելությունների ընթացքում պարզվեց, որ «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված մի շարք փոփոխությունները պայմանավորված են հատված ծառեր առկայությամբ, որոնք հաշվառված չեն եղել՝ որպես ապօրինի հատված ծառեր:

ի/ Հաշվեքննության ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաթեթների ուսումնասիրությամբ պարզվեց, որ «Սելկկիա» ՍՊԸ-ի հայտերին կից ներկայացված ներդրումային ծրագրերում չի նշվել ներդրումների ժամանակացույցը, սակայն վերջիններիս հետ կնքվել են վարձակալության պայմանագրեր, ինչը չի բխում վերոնշյալ որոշման պահանջներից:

լ/ Հրազդանի անտառտնտեսություն մասնաճյուղում ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ստացված տեղեկատվության համաձայն՝ չեն ներկայացվել պայմանագրով նախատեսված տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև՝ 2020 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին անտառապետի այցելության ժամանակ աշխատանքներ կատարված չեն եղել:

խ/ վերահսկվող ժամանակահատվածում 83 աշխատակից ընհանուր 2022 աշխատանքային օր գտնվել են ՀՀ տարածքից դուրս, սակայն աշխատաժամերի հաշվարկման տեղեկագրերում իրականացվել է բացակայած օրերի համար աշխատաժամերի հաշվարկ, առանց համապատասխան փաստաթղթային հիմնավորումների, որի համար վճարվել է 9,216.2 հազ. դրամ:

ծ/ Չեն պահպանվել 2017-2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի 2.4.7 կետի դրույթները, համաձայն որի ՊՈԱԿ-ը պարտավոր է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան: Հայանտառ ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018 թվականներին առանց նշված ընթացակարգը պահպանելու իրականացվել է թվով 1030 ձեռքբերում՝ 227,642.5 հազ. դրամի չափով, որի դիմաց վճարվել է 198,493.2 հազ. դրամ:

### *Ոչ լիարժեք եզրահանգում*

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը, բոլոր էական առումներով, համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Դավիթ Չիբուխչյան ՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
29 մարտի 2019 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

# II. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Պետական բյուջեից ստացված աջակցություն

***2017 թվական***

09.02.2017թ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայանտառ ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման թիվ ԱԲ-5 պայմանագիրը (այսուհետ՝ դրամաշնորհի պայմանագիր)՝ 1,188,886.9 հազ. դրամի չափով: Ըստ պայմանագրի հավելված 1-ի՝ ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշներն են՝ ապօրինի հատումների և այլ ապօրինությունների արձանագրումը, ապօրինությունների հայտնաբերման տոկոսի աճը, արձանագրված ակտերի շարժը: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս ունենալ 344,2 հազ. հա ապօրինի հատումներից, արածեցումներից, հողազավթումներից և հրդեհներից պահպանված անտառային հողեր:

Պայմանագրի հավելված 2-ով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը ներկայացված է Հավելված 1-ում:

***2018 թվական***

05.02.2018թ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքվել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման թիվ ԱԲ-5 պայմանագիրը՝ 1,981,184.3 հազ. դրամի չափով: Ըստ պայմանագրի հավելված 1-ի՝ գումարը պետք է ծախսվեր.

- ✓ անտառպահպանական ծառայությունների համար՝ 1,426,664.3 հազ. դրամ,
- ✓ անտառշինություն և անտառկառավարման պլանների կազմում՝ 318,000.0 հազ. դրամ,
- ✓ կադաստրի վարում՝ 36,000.0 հազ. դրամ,
- ✓ անտառների հաշվառում և գույքագրում՝ 200,520.0 հազ. դրամ:

13.07.2018թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության Անտառային կոմիտեի և Անտառային կոմիտեի Հայանտառ ՊՈԱԿ-ի միջև կնքվել է դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների

օգտագործման թիվ ԱԲ-5/2 պայմանագիրը՝ 791,646.5 հազ. դրամ գումարի չափով: Ըստ պայմանագրի հավելված 1-ի՝ դրամաշնորհի գումարը հատկացվել է միայն անտառպահպանական ծառայությունների իրականացման համար:

24.12.2018թ.-ին կողմերի միջև կնքված թիվ 5/2-1 համաձայնագրով կատարվել է վերը նշված պայմանագրում փոփոխություն: Պայմանագրում և հավելվածում նշված գումարը՝ 791,646.5 հազ. դրամ, փոխարինվել է 828,868.6 հազ. դրամով: Պայմանագրով հատկացված գումարից 37,222.1 հազ. դրամը պայմանագրային հիմքով կհատկացվի անհրաժեշտ արտահագուստի և կոշիկի ձեռքբերմանը:

Պայմանագրի հավելված 2-ով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը ներկայացված է Հավելված 1-ում:

**2. Միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ (Թեղուտ ՍՊԸ)**

2.12017թ.-ի սեպտեմբերի 22-ին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ՊՈԱԿ-ին հատկացվել է 20,982.0 հազ. դրամ դրամաշնորհ: Պայմանագրի հավելված 4-ի ծրագրի առաջարկի համաձայն՝ դրամական միջոցները տրամադրվում են Գուգարքի և Հրազդանի անտառտնտեսություններին (ԱՏ), յուրաքանչյուրին՝ 10,491.0 հազ. դրամ: Ծրագրի նախահաշվի համաձայն՝ տվյալ գումարը պետք է ծախսվեր երեք ուղղություններով՝ ճյուղերի/կոճղաշիվերի հատում և դրանց հեռացում ծրագրի տարածքից՝ 6,960.0 հազ. դրամ, լրացուցիչ հատող գործիքների վարձակալություն՝ 2,475.0 հազ. դրամ, տրանսպորտային ծախսեր՝ 1,056.0 հազ. դրամ

Ծրագրի տևողությունը ընդգրկում է 2017թ.-ի սեպտեմբերից մինչև 2018թ.-ի հունվար ամիսները: Ծրագրի շրջանակներում ԳՄՀԸ-ի կողմից ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման է տրամադրվել 8 շղթայավոր սղոց և 2 թփհատ սարք:

2.2 2017թ. հոկտեմբերի 9-ին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «Անտառտնտեսության ղեկավար աշխատակիցների և մասնագետների մասնագիտական առաջխաղացման համառուսական ինստիտուտի» (ФАУ ДПО

ВИПКЛХ) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ 2017թ.-ի հոկտեմբերի 23-27-ի ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը պարտավորվել է իրականացնել կառավարման ապարատի ղեկավարների և Մոսկվայի շրջանի պետական գանձարանի մասնագետների որակավորման բարձրացման աշխատանքներ:

Վերոնշյալ աշխատանքների համար «Անտառտնտեսության ղեկավար աշխատակիցների և մասնագետների մասնագիտական առաջխաղացման համառուսական ինստիտուտը» պարտավորվել է վճարել 348,150.0 ռուսական ռուբլի (2,785.2 հազ. դրամ):

Տրանսպորտի ապահովման նպատակով նախատեսվել է 360.0 հազ. դրամ, որի նպատակով 2017թ.-ի հոկտեմբերի 23-ից 27-ը ընկած ժամանակահատվածի համար վարձակալվել է 1990թ.-ի արտադրության ՌԱՖ մակիշի միկրոավտոբուս:

2.3 2018թ.-ի հունվարի 23-ին բնապահպանության նախարարության, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակ (երկուսը միասին հանդես են եկել որպես Նվիրաբերող) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (նվիրաբերությունը ստացող) միջև կնքված պայմանագրի շրջանակներում ՊՈԱԿ-ին տրամադրվել է 106,192.8 հազ. դրամ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված 2 միջոցառումների իրականացման համար: Նվիրաբերողի կողմից տրամադրվում է 11,799.2 հազ. դրամ Սյունիքի մարզի 4 գյուղական բնակավայրերի (Ծավ, Շիկահող, Սրաշեն, Ներքին հանդ) 247 տնային տնտեսություններին՝ ընդհանուր 2300 խմ վառելափայտի ապահովման համար, 76,694.8 հազ. դրամ՝ սարքավորումների ձեռքբերման համար, մնացած 17,698.8 հազ. դրամը տրամադրվում է ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Պայմանագրով նախատեսված սարքավորումներ.

- Տրակտոր-1 հատ
- Սղոցարան-2 հատ
- Վառելափայտ ճեղքելու սարք-3 հատ
- Փայտածուխի արտադրամաս-1 հատ
- Չորանոց-1 հատ

- ՈՒԱԶ պատրիոտ մակնիշի ավտոմեքենա - 2 հատ
- ՈՒազ հանտեռ մակնիշի ավտոմեքենա – 2 հատ

2018թ.-ի մայիսի 15-ին վերոնշյալ պայմանագրում կատարված փոփոխությունների արդյունքում սարքավորումների ցանկը փոփոխվել է.

- Սղոցարան - 2 հատ (ձեռք է բերվել՝ 4,680.0 հազ. դրամ)
- Վառելափայտ ճեղքելու սարք - 4 հատ (ձեռք է բերվել՝ 6,800.0 հազ. դրամ)
- Չորանոց - 1 հատ (ձեռք է բերվել՝ 4,800.0 հազ. դրամ)
- Տոյոտա ԼԿ պռադո 4.0լ մակնիշի ավտոմեքենա – 1 հատ (ձեռք է բերվել՝ 25,700.0 հազ. դրամ)
- Ուազ պատրիոտ մակնիշի ավտոմեքենա – 1 հատ (ձեռք է բերվել՝ 8,450.0 հազ. դրամ)
- Ուազ հանտեռ մակնիշի ավտոմեքենա – 7 հատ (ձեռք է բերվել՝ 6,900.0 հազ. դրամ)։

2.4 2018թ.-ի հոկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ՊՈԱԿ-ին տրամադրվել է 292,170.0 ԱՄՆ դոլարի չափով գումար, որի դիմաց 2018թ.-ի հոկտեմբերից մինչև 2019թ.-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացվի ՀՀ Տավուշի և Լոռվա մարզերի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի, Նոյեմբերյանի, Արծվաբերդի, Գուգարքի, Եղեգնուտի և Լալվարի անտառտնտեսությունների տարածքներում դեգրադացված անտառների վերականգնման նախագծի պատրաստում, գործողությունների իրականացում և բնական վերաճին աջակցման միջոցառումներ։

Մասնավորապես՝

- 1700 հա-ի վրա բնական վերաճի օժանդակման միջոցառումների իրականացում, որի համար նախատեսվել է տրամադրել 212,770.0 ԱՄՆ դոլարի չափով գումար,

- 300 հա-ի վրա կոճղաշիվային ծառուտների վերակառուցման աշխատանքների իրականացում, որի համար նախատեսվել է տրամադրել 79,400.0 ԱՄՆ դոլարի չափով:

2019թ.-ի հունիսի 3-ին ՄԱԶԾ-ի և ՊՈԱԿ-ի միջև փոխադարձ համաձայնության համաձայն՝ ծրագրի իրականացման վերջնաժամկետը երկարացվել է մինչև 2019թ.-ի նոյեմբերի 30-ը:

01.01.2019 թվականի դրությամբ տվյալ պայմանագրի շրջանակներում ծախսը կազմել է 98,267.8 հազ. դրամ:

**3. Անտառահատում և իրացում**

01.02.2017թ.-ի ՊՈԱԿ-ին ամրացված անտառներում 2017 թվականին իրականացվելիք խնամքի և սանիտարական հատումների ծավալները հաստատելու մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարի թիվ 21-Ա հրամանի համաձայն՝ 2017 թվականին հատումների ծավալները կազմել է 10,780.0 խմ: Այնուհետև տարվա ընթացքում կատարվել են թվով 7 փոփոխություններ, որոնց արդյունքում տարեկան առաջադրանքի ծավալը ավելացվել է և կազմել է 25,181.0 խմ: 2017թ.-ի ընթացքում տրամադրվել է 179 հատ անտառահատման տոմսեր, ըստ որի պետք է հատվեր 25,226.3 խմ, որից շինափայտ՝ 2,237.0 խմ: Փաստացի մթերվել է 30,110.3 խմ, որից շինափայտ՝ 2,330.0 խմ:

06.02.2018թ.-ի ՊՈԱԿ-ին ամրացված անտառներում 2018 թվականին իրականացվելիք բնափայտի մթերման ծավալները հաստատելու մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարի թիվ 21-Ա հրամանի համաձայն՝ տարեկան առաջադրանքը կազմել է 17,036.0 խմ: Այնուհետև տարվա ընթացքում կատարված թվով 9 փոփոխությունների արդյունքում տարեկան առաջադրանքը ավելացել և կազմել է 42,757 խմ: 2018թ.-ի ընթացքում տրամադրվել է 155 հատ անտառահատման տոմսեր, ըստ որի պետք է հատվեր 42,302.3 խմ, որից շինափայտ՝ 4,131.0 խմ: Փաստացի մթերվել է 36,050.6 խմ, որից շինափայտ՝ 3,753.9 խմ (Հավելված 2.1, 2.2):

Թափուկի ծավալը 2017 թվականին կազմել է 50,516.8 խմ, որից շինափայտ՝ 676.4 խմ: 2017 թվականին թափուկից իրացվել է 2,215.5 խմ, որից շինափայտ՝

569.4 խմ: Թափուկի ծավալը 2018 թվականին կազմել է 46,424.3 խմ, որից շինափայտ՝ 177.0 խմ:

ՊՈԱԿ-ի փայտանյութի իրացումից հասույթը 2017թ.-ին կազմել է 486,048.4 հազ. դրամ, 2018թ.-ին՝ 609,689.6 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի կողմից 2017թ.-ի ընթացքում անվճար տրամադրվել է 20,500 հատ տնկիներ, վաճառվել է 83,205 հատ տնկիներ՝ 13,012.0 հազ. դրամ արժեքով: 2018թ.-ի ընթացքում իրացվել է 49150 հատ տնկիներ՝ 7,355.2 հազ. դրամ արժեքով:

Հրազդան մասնաճյուղում 2017թ.-ի սկզբին տնկիների մնացորդը կազմել է 554.0 հազ. հատ, տարվա վեջին՝ 497.4 հազ. հատ, և 2018թ.-ի տարվա վերջին՝ 910.3 հազ. հատ: Հրազդան մասնաճյուղում *<u>տնկիների աճեցման և բաշխման ոչ ճիշտ պլանավորման արդյունքում</u>* 2013-2017թթ.-ի ընթացքում հիմնադրված տնկարանների ցանքսի հողամասերում 2017թ.-ի նոյեմբերի դրությամբ առկա են եղել 136925 հատ, իսկ 2018թ.-ի դեկտեմբերի դրությամբ՝ 283875 հատ դուրս գրման ենթակա տնկիներ, որից՝ 280425 հացենի տեսակի (տնկիները այս պահի դրությամբ դուրս գրված չեն): Մեկ տարվա ընթացքում Հրազդան մասնաճյուղում առաջացել է 143500 հատ դուրս գրման ենթակա հացենի տեսակի տնկիներ, այն դեպքում, երբ տնկիների մնացորդը 2018թ.-ի վերջին ավելացել է 287149 հատով:

## <u>4. Անտառային հողերի վարձակալություն</u>

2018 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կնքվել են թվով 5 անտառային հողերի վարձակալության և 11 սերվիտուտի պայմանագրեր:

**2018 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կնքված վարձակալության պայմանագրեր**

Աղյուսակ 1

| Հ/Հ | Պայմանագրի կողմ | Պայմանագրի տեսակ | Պայմանագրերի քանակ | Օգտագործման նպատակ | Տարածքի չափ /հա/ | Վճարի չափ /տարեկան/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ԲԵՑ» ՓԲԸ | Անտառային հողերի սերվիտուտ | 11 | «110 կվ Լալվար և Նոյեմբերյան օդային գծերի փոխարինում ծրագրի իրականացում. | 0.76293 | 152400 |
| 2 | Ջավեն | Անտառային | 1 | Վարչական շենքի | 0.1 | 9000 |

| Հ/Հ | Պայմանագրի կողմ | Պայմանագրի տեսակ | Պայմանագրերի քանակ | Օգտագործման նպատակ | Տարածքի չափ /հա/ | Վճարի չափ /տարեկան/ |
|---|---|---|---|---|---|---|
| | Նազլուխանյան | հողերի վարձակալություն | | սպասարկում | | |
| 3 | «Սելևկիա» ՍՊԸ | Անտառային հողերի վարձակալություն | 2 | Հանգստի կազմակերպում | 0.1 | 92520 |
| 4 | Արմեն Սարգսյան | Անտառային հողերի վարձակալություն | 1 | Հանգստի և զբոսաշրջության | 0.1 | 77100 |
| 5 | Անի Կոստանդյան | Անտառային հողերի վարձակալություն | 1 | Հանգստի և զբոսաշրջության | 0.2 | 96000 |

Սերվիտուտի պայմանագրերը կնքվել են «ԲԵՑ» ՓԲԸ-ի հետ՝ հենարանների տեղակայման համար նախատեսված մոտեցման ճանապարհի կառուցման, էլեկտրահաղորդման օդային գծերի անցկացման և դրանց հետագա շահագործման նպատակով:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017-2018թթ ՊՈԱԿ-ի կողմից որևէ անտառային նշանակության հող հավատարմագրային կառավարման չի հանձնվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 05.03.2019թ. թիվ 4/3 որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությամբ արձանագրված փաստերի և առաջարկությունների վերաբերյալ իրականացված աշխատանքների մասով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ բոլոր վարձակալները ծանուցվել են ՀՀ կառավարության որոշման պահանջներին պայմանագրերը համապատասխանեցնելու վերաբերյալ, ինչպես նաև՝ զուգահեռ մշակվում են հայցադիմումներ՝ արտադատական կարգով վեճերը չլուծելու դեպքում դատական կարգով դրանք լուծելու նպատակով:

## 5. ՊՈԱԿ-ի ծախսեր

ՊՈԱԿ-ի հաստիքային աշխատողների և հրամանագրված սեզոնային աշխատողների հաշվարկային աշխատավարձը 2017թ.-ին կազմել է 1,422,450.05 հազ. դրամ, իսկ 2018թ.-ին կազմել է՝ 1,448,768.44 հազ. դրամ:

2017 թվականին հաստիքային աշխատակիցների թվաքանակը կազմել է 942, սեզոնային բանվորները՝ 341, և փայտանյութի մթերման բանվորներ՝ 38 անձ: 2018 թվականին՝ հաստիքային աշխատակիցները՝ 923, սեզոնային բանվոր՝ 936 անձ:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում գնումների պլանով նախատեսվել է կատարել ընդամենը 225,492.4 հազ. դրամի գնում, որից գնումների ընթացակարգով կատարվել է 36,932.0 հազ. դրամի գնում: 2017 թվականին գնումների ընթացակարգով կնքվել են թվով 7 պայմանգրեր:

2018 թվականի ընթացքում Հայնտառ ՊՈԱԿ-ի գնումների պլանով նախատեսված է եղել կատարել ընդամենը 396,505.2 հազ. դրամի գնում, որից գնումների ընթացակարգով կատարվել է 133,553.4 հազ. դրամի գնում: 2018 թվականին գնումների ընթացակարգով կնքվել է թվով 20 պայմանագրեր:

2017 և 2018 թվականների գնումների պլաններով շարունակաբար նախատեսվել են տարբեր գնումներ, որոնք չեն իրականացվել՝ օրինակ ձիեր, հրացաններ, հեռադիտակներ և այլն:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2017թ-ի գնումների պլանով արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել է իրականացնել 225,492.4 հազ. դրամի գնումներ, սակայն իրականացվել է միայն 36,932.0 հազ. դրամի, իսկ 2018թ-ին նախատեսված 396,505.2 հազ. դրամի փոխարեն՝ 133,553.4 հազ. դրամի: Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն (ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման կետ 11, 21 և 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման կետ 11) գնման ընթացակարգը սկսելու համար սահմանվում է պատասխանատու ստորաբաժանում, որը կազմում է գնման հայտը և հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին: Ուստի իրականացվել են միայն այն ընթացակարգերը, որոնց մասով ներկայացվել են գնման հայտեր:

# III. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 1. Պետական բյուջեից ստացված աջակցություն

1.1 2018 թվականի հունիսի 22-ի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի N-172-Լ հրամանով հաստատվել է Անտառային կոմիտեի կանոնադրությունը, որի 11.1 կետի համաձայն, կոմիտեի գործառույթներից է անտառային պետական ծառայությանը օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումը:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) հրապարակված Անտառային կոմիտեի ստեղծման հիմնավորող փաստաթղթերի համաձայն, Անտառային կոմիտեի ստեղծման նախապայմաններից են ՀՀ անտառների կայուն կառավարման և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառներում պետական միասնական քաղաքականության մշակման ու իրականացման արդյունավետության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Անտառային պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության Անտառային պետական կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հիմնավորումում ամրագրված է, որ կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում կարող են ներառվել նաև առանձնացված ստորաբաժանումներ և այդ ստորաբաժանումներից է հանդիսանալու անտառային պետական ծառայությունը, ինչը դեռևս ներառված չէ կառուցվածքում, քանի որ ՀՀ անտառային օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ անտառային պետական ծառայության գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքը դեռևս ընդունված չէ, իսկ անտառային ծառայությունը հատուկ ծառայության տեսակ է համարվում, ուստի՝ անտառային պետական ծառայությունը հնարավոր կլինի ստեղծել օրենքի ընդունումից հետո:

Անտառային պետական ծառայություն ստեղծելու նախագիծը մշակվել և քննարկման է ներկայացվել 2018 թվականի մարտի 16-ին: Նախագիծը մշակվել է <<Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում>> ծրագրի աջակցությամբ և պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 50 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի 17-րդ կետի պահանջներից, այն է՝ Անտառային պետական կոմիտեի կառավարման ներքո ձևավորել անտառների պատշաճ պահպանությանը նպատակաուղղված պարեկապահակային գործառույթներ իրականացնող անտառային պետական ծառայություն:

Վերը նշված կայքում հրապարակված «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով՝ տարանջատվել է անտառների պահպանության և պաշտպանության գործառույթները: Անտառային ծառայությանը վերապահելով բացառապես անտառների պահպանության գործառույթը, քանի որ վերջինիս հիմնական գործառույթը պետք է լինի անտառների և անտառային հողերի պահպանությունը՝ հրդեհների, ինքնակամ զավթումների, ապօրինի հատումների, արածեցումների, աղտոտման, աղբոտման և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը վնաս պատճառող այլ գործողությունների դեմ ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, իսկ պաշտպանության գործառույթը նոր ստեղծված Անտառային պետական կոմիտեի գործառույթն է: Ինչպես նաև ամրագրվել են ֆիզիկական ուժի, զենքի և հատուկ միջոցների կիրառման կարգը, պայմանները և սահմանները, հատուկ միջոցների տեսակները:

**Ինչպես երևում է չնայած այն հանգամանքին, որ Անտառային Կոմիտեն գործում է դեռևս 2018թ-ի հունիսի 22-ից սակայն, իրեն վերապահված գործառույթները լիարժեքորեն չի կարողանում իրականացնել, քանի որ անտառային պետական ծառայության մասին օրենքի նախագիծը մինչ օրս գտնվում է լրամշակման փուլում:**

1.2 2017 և 2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի հավելված 2-ով (Ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման

ժամանակացույց) սահմանվել է ցուցանիշ՝ անտառախախտումների հայտնաբերում (թիվ), համապատասխանաբար՝ 2017թ.-ին՝ 700, 2018թ.-ին՝ 700:

Դրամաշնորհի պայմանագրերի հավելված 1-ով իրականացվող միջոցառումներում, որպես ակնկալվող արդյունք և դրանց գնահատման չափանիշ, նշված է արձանագրված ակտերի շարժը:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականին արձանագրվել է 243 ակտ՝ 1823 ծառի մասով, 2018 թվականին արձանագրվել է 278 ակտ՝ 3072 ծառի մասով:

**Ըստ էության ստացվում է, որ դրամաշնորհի պայմնագրերով սահմանված թիվը վերաբերում է անտառխախտման հայտնաբերման դեպքում կազմված արձանագրությունների թվին, այլ ոչ թե՝ իրավախախտման արդյունքում ապօրինի հատված ծառերի քանակին:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 68-րդ, 70-րդ, 71-րդ և 72-րդ հոդվածներով սահմանվում են համապատասխան տուգանքներ՝ հետևյալ իրավախախտումների մասով.

- Անտառօգտագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված նպատակներին կամ պահանջներին չհամապատասխանող անտառօգտագործումը
- Պետական անտառային հողերում խոտհարքները և արոտահանդակները վնասելը
- Անտառներում և պետական անտառային ոչ անտառապատ հողերում ինքնակամ խոտհունձ կատարելն ու անասուններ արածեցնելը և (կամ) դրանց կանոնները խախտելը
- Ինքնագլուխ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ հավաքելը

**Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017-2018 թվականներին այլ անտառախախտման դեպքեր, բացի ապօրինի անտառահատումների, ընդհանրապես չեն արձանագրվել:**

## 2 Միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհներ

2.1 2018թ.-ի հունվարի 23-ին բնապահպանության նախարարության, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակ (երկուսը միասին հանդես են եկել որպես Նվիրաբերող) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (նվիրաբերությունը ստացող) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը պետք է տրամադրվեր ընդհանուր 2300 խմ վառելափայտ՝ 11,799.2 հազ. դրամ արժեքով: **Մինչդեռ՝ ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2018թ.-ի փետրվար, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում տրամադրվել է 1637 խմ վառելափայտ՝ 8,397.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով:**

2018թ.-ի մայիսի 15-ին իրականացված պայմանագրի փոփոխությամբ նախատեսված Տոյոտա ԼԿ պռադո 4.0լ մակնիշի ավտոմեքենայի մատակարարման նպատակով ՊՈԱԿ-ի և «Տոյոտա Երևան» ՍՊԸ միջև 27.09.2018թ.-ին 25,700.0 հազ. դրամ արժեքով կնքված պայմանագրի համաձայն՝ մատակարարումը պետք է իրականացվեր 10.10.2018 թ.-ին, որը ներկայացված առարկությունների և բացատրությունների համաձայն, 09.10.2018 թ.-ին կնքված համաձայնագրով կատարված փոփոխությամբ պետք է իրականացվեր 10.11.2018 թ.ին: Սակայն ընդունման-հանձնման ակտի համաձայն՝ մատակարարումը իրականացվել է 2018թ.-ի նոյեմբերի 13-ին: Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ մատակարարման յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ 0.05 տոկոսի չափով: **Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետներից 2 օր ուշացման համար տույժը կազմում է 25.7 հազ. դրամ:**

Պայմանագրի փոփոխությամբ տրակտորի և փայտածուխի արտադրամասի փոխարեն տվյալ մեքենայի ձեռքբերումը, ստացված տեղեկատվության համաձայն, պայմանավորված է հետևյալով.

Սարքավորումների և տրամսպորտային միջոցների ձեռքբերման հիմնական նպատակը եղել է նվիրաբերություն ստացողի տեխնիկական կարողությունների

բարելավումը և թիրախային անտառային տարածքների պահպանության, կառավարման օպերատիվության արդյունավետության բարձրացումը:

Կոմիտեի կողմից ՊՈԱԿ-ում նախատեսվող օպտիմալացման արդյունքում կառուցվածքային փոփոխությամբ Կապանի անտառտնտեսությանը պետք է միացվեին ևս 3 մասնաճյուղեր, որի արդյունքում Կապանի անտառտնտեսության ենթակայության անտառային հողերի մակերեսը 2 անգամ կմեծանար (38253 հա-ից պետք դառնար 75249 հա): Այդ կապակցությամբ, գերմանական KFW բանկի հետ համաձայնեցնելով, նախատեսվել է ձեռք բերել Տոյոտա ԼԿ պռադո 4.0լ մակնիշի ավտոմեքենա, որպեսզի Կապանից մինչև Եղեգնաձոր ընկած անտառների կառավարումը իրականացվի օպերատիվ:

2018թ.-ի նոյեմբերի 20-ին ՊՈԱԿ-ի տնօրենի և բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատարի միջև կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի համաձայն՝ ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից Տոյոտա մակնիշի lc 150 4.0 gas թեթև մարդատար տեսակի ավտոմեքենան տրամադրվել է կոմիտեի նախագահի պաշտոնակատարին:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ տրամադրման պատճառ է հանդիսացել այն, որ կոմիտեն ստեղծելիս պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով կոմիտեի համար նախատեսվել է ավտոմեքենայի պահպանման, շահագործման, վառելանյութի ձեռքբերման և այլ ծախսեր, սակայն մեքենայի ձեռքբերման կամ վարձակալության համար ֆինանսավորում չէր նախատեսվել:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2019թ-ի հունիսի 21-ին, Տոյոտա մակնիշի lc 150 4.0 gas մակիշի տրանսպորտային միջոցի ձեռքբերման գործընթացի վերաբերյալ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 61203319 քրեական գործ:

**Նախնական պայմանագրով նախատեսված տրակտորի և փայտածուխի արտադրամասի ձեռք բերումը 2018 թվականի փետրվարի 1-ին հաստատված գնումների պլանում ներառված չի եղել:**

**Պայմանագրով նախատեսված սղոցարանները ներառվել են 2018թ.-ի ՊՈԱԿ-ի գնումների պլանում, որպես փայտի մշակման հաստոցներ, յուրաքանչյուրը՝ 2,400.0 հազ. դրամով: Տվյալ փայտի մշակման հաստոցները մատակարարվել է «Էլար գոլդ» ՍՊԸ-ի կողմից, և յուրաքանչյուրի համար վճարվել է 2,340.0 հազ. դրամ: Մինչդեռ՝ 2017թ.-ի ՊՈԱԿ-ի հաստատված գնումների պլանի համաձայն՝ փայտի մշակման հաստոցների ձեռք բերման համար նախատեսվել է 750.0 հազ. դրամ, և նմանատիպ հաստոցը ձեռք է բերվել Աշոտ Հակոբյան ԱՁ-ից՝ 750.0 հազ. դրամ արժեքով:**

Հաշվեննվող օբյեկտի առարկություն.

«Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի հետ կնքված բարձր անցողունակությամբ մեքենայի մատակարարման ՀԱ-ԲՄԱՊՁԲ-18-2 պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրով՝ մինչև 10.11.2018թ., կողմերի միջև 09.10.2018թ-ին կնքված N ՀԱ-ԲՄԱՊՁԲ-18-2 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրով:

Տրակտորի և փայտածուխի արտադրամաս գնման առարկաները ներառված չեն եղել 2018թ-ի փետրվարի 1-ին հրապարակված գնումների պլանում, քանի որ D-230118/2-25 նվիրաբերության պայմանագիր կնքվելուց հետո վարվել են բանակցություններ ձեռք բերվելիք ապրանքների վերաբերյալ, վերջնական համաձայնագիր D-230118/2-25 նվիրաբերության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին կնքվել է 2018 մայիսի 15-ին, որի համաձայն գնումների պլանում կատարվել են փոփոխություններ: Գնումների պլանում ապրանքները ներառվել են մայիսի 17-ին, որից հետո սկսվել է գնման գործընթացները:

2018 թ-ին սղոցարանները ձեռք են բերվել գնանշման հարցման ընթացակարգով, նախահաշվային գինը ձևավորվել է 2018 թվականին շուկայի ուսումնասիրության արդյունքում: Աշոտ Հակոբյան ԱՁ-ից 750 հազ. դրամով 2017թ-ն ձեռք բերված սղոցարանը ձեռք է բերվել մեկ անձից գնման ընթացակարգով, գինը ձևավորվել է բանակցությունների արդյունքում:

2.2. 2018թ.-ի հոկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի վերաբերյալ

Գուգարքի մասնաճյուղից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2018թ.-ի ընթացքում բնական վերաճի օժանդակման աշխատանքների համար ծախսվել է 6,869.0 հազ. դրամ, և կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքների համար՝ 6,959.6 հազ. դրամ: Մինչդեռ, ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ Գուգարք մասնաճյուղում բնական վերաճի օժանդակման աշխատանքների համար ծախսվել է 8,201.1 հազ. դրամ և կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքների համար՝ 10,833.6 հազ. դրամ:

Նոյեմբերյան մասնաճյուղում բնական վերաճի օժանդակման աշխատանքների համար ծախսվել է 22,062.0 հազ. դրամ, իսկ Նոյեմբերյան մասնաճյուղից ստացված տեղեկատվության համաձայն՝ ծախսվել է 21,340.5 հազ. դրամ:

Արծվաբերդ մասնաճյուղում բնական վերաճի օժանդակման աշխատանքների համար ծախսվել է 10,680.5 հազ. դրամ և կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքների համար՝ 2,040.8 հազ. դրամ, իսկ Արծվաբերդ մասնաճյուղից ստացված տեղեկատվության համաձայն՝ բնական վերաճի օժանդակման աշխատանքների համար ծախսվել է 3,932.6 հազ. դրամ և կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքների համար՝ 1,856.0 հազ. դրամ:

**Տվյալ երեք մասնաճյուղերի մասով, առկա է անհամապատասխանություն՝ 12,833.3 հազ. դրամի չափով՝ ՊՈԱԿ-ի կողմից և մասնաճյուղերի կողմից տրամադրված վերոնշյալ ծրագրի շրջանականերում կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունների միջև:**

## 3 <u>Արտադրանքի, ապրանքների իրացում</u>

**3.1** ՀՀ անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բնափայտի մթերումն իրականացվում և տարեկան հաշվարկային հատատեղերը որոշվում են անտառաշինական նախագծերի հիման վրա: Անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում՝ բնափայտի մթերումն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմնի

ստեղծած մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունների և եզրակացությունների հիման վրա:

25.11.2004թ.-ի 1933-Ն որոշմամբ հաստատված՝ հատման գծով բնափայտի մթերման տարեկան նորմայի (հաշվարկային հատատեղի) հաշվարկման և հաստատման կարգի 7-րդ կետի համաձայն՝ բնափայտի մթերման տարեկան նորման (հաշվարկային հատատեղ) սահմանելու համար հիմք են հանդիսանում՝

ա) անտառաշինական նախագծերի հիման վրա կազմված անտառների կառավարման պլանները,

բ) անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում՝ մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունները և եզրակացությունները,

գ) անտառների պետական հաշվառման և գույքագրման տվյալները:

Հիմք ընդունելով 16.11.2017թ.-ի ՀՀ գյուղատնտեսության նախարարի թիվ 253-Ա հրամանը՝ բնափայտի մթերումն իրականացվել է պետական կառավարման լիազորված մարմնի ստեղծած մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունների և եզրակացությունների հիման վրա:

ՊՈԱԿ-ի տարեկան առաջադրանքը մասնագիտական հանձնաժողովների կողմից հաստատվել և տարվա ընթացքում ենթարկվել է մի քանի փոփոխությունների: 2017թ.-ին անտառահատման տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է 10,780.0 խմ, այնուհետև փոփոխությունների արդյունքում ծավալը ավելացել և տարվա վերջին կազմել է 25,181.0 խմ: 2018թ.-ին տարեկան առաջադրանքը տարվա սկզբին կազմել է՝ 17,036.0 խմ, որը ավելացել և տարվա վերջին կազմել է 42,757.0 խմ:

ՀՀ կառավարության 17.09.2015թ.-ի թիվ 1072 որոշմամբ հաստատված՝ հատատեղի հատկացման և տեղազննման կարգի 4-րդ կետի համաձայն՝ հատատեղի հատկացման նախապատրաստական աշխատանքները կատարվում են ամռան-աշնան ժամանակահատվածում՝ հատումներին նախորդող տարվա ընթացքում: 5-րդ կետի համաձայն, հատատեղերի հատկացումից առաջ կատարված նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո կազմված

նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակը և հատատեղի անձնագիրը) անտառտնտեսությունը տրամադրում է կազմակերպությանը, որը, ամփոփելով դրանք, ըստ անտառտնտեսությունների՝ հաջորդ տարվա հաշվարկային հատատեղերը (տարեկան հատումների ծավալները) հաստատելու համար ներկայացնում է լիազոր մարմնին: Իսկ 6-րդ կետի համաձայն, ըստ անհրաժեշտության՝ ընթացիկ տարում կարող է հատկացվել լրացուցիչ հատատեղ (հատատեղեր)՝ կարգի դրույթներին համապատասխան:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ 12.12.2017թ.-ին կատարված՝ 6-րդ փոփոխությունից հետո հաջորդ փոփոխությունը կատարվել է 19.12.2017թ.-ին, որով ընհանուր հատատեղային ֆոնդը ավելացել է ընդամենը 5 խմ-ով: **Պարզ չէ մեկ շաբաթվա ընացքում ընդամենը 5խմ ավելացման անհրաժեշտությունը:**

28.09.2018թ.-ին կատարված 8-րդ փոփոխությունից հետո հաջորդ փոփոխությունը կատարվել է 30.11.2018թ.-ին: ՊՈԱԿ-ի առաջադրանքի ծավալը, որը արդեն կազմել էր 44457 խմ, նվազեցվել է 1699.8խմ վառելափայտով: **Այնինչ վերը հիշատակած կառավարության որոշումով նշվում է լրացուցիչ հատատեղ հատկացնելու, ոչ թե՝ նվազեցնելու մասին:**

08.08.2017թ.-ին կատարված փոփոխության մեջ Նոյեմբերյան մասնաճյուղի հատատեղային ֆոնդը ավելացել է 1856 խմ-ով, և նույն օրը նույն ծավալով Նոյեմբերյան մասնաճյուղի կողմից տրամադրվել է 7 հատ անտառահատման տոմս:

Հարկ է նշել, որ 05.02.2018թ.-ին կնքված դրամաշնորհի պայմանագրով նախատեսված է եղել անտառշինություն և անտառկառավարման պլանների կազմումը՝ 318,000.0 հազ. դրամ, ինչը նախատեսված չէ 13.07.2018թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության Անտառային կոմիտեի և Անտառային կոմիտեի Հայանտառ ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհի տրամադրման թիվ ԱԲ 5/2 պայմանագրով:

**Հաշվեննվող օբյեկտի բացատրություն**.

«Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում անհարաժեշտություն է առաջացել կատարելու խնամքի (լուսավորում, մաքրում) հատում: 19.12.2017թ-ին

հատատեղային ֆոնդը փոփոխվել է՝ ավելանալով 5 խմ-ով, հիմք ընդունելով 19.12.2017 թ-ի N 90 հրամանը:

**3.2 Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին թիվ 806-Ն որոշմամբ հաստատված հավելվածի դրույթները**, մասնավորապես 19-րդ կետի համաձայն, բնափայտ մթերելիս՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում են՝

1) արմատի վրա հատման ենթակա ծառուտի դեպքում՝ ծառուտի առուվաճառքի մասին պայմանագիր.

2) անտառավերականգնման, միջանկյալ (խնամքի) և սանիտարական հատումներ իրականացնելու դեպքում՝ անտառատնտեսական աշխատանքների կատարման մասին պայմանագիր:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ մասնաճյուղերի կողմից 2017 թվականին կնքվել են պայմանագրեր, որոնց համաձայն գնորդները պարտավորվում են **ինքնապատրաստման եղանակով** գնել փայտանյութ: Նշված պայմանագրերի 2.1-րդ կետի համաձայն՝ մասնաճյուղը պարտավորվում է գնորդին տրամադրել անհրաժեշտ փայտանյութը իր կողմից հաստատված գնով՝ անտառում, իսկ գնորդը պարտավորվում է իր միջոցներով և իր հաշվին՝ անտառտնտեսության աշխատակցի անմիջական հսկողության ներքո կատարել գնված փայտանյութի պատրաստումը, դուրս բերումը և տեղափոխումը:

**ՀՀ կառավարության որոշման վերը նշված դրույթի համաձայն՝ բնափայտ մթերելիս անտառտնտեսությունները իրավասու են կնքելու 2 տիպի պայմանագիր՝ անտառատնտեսական աշխատանքների կատարման և ծառուտի առուվաճառքի, մինչդեռ ինքնապատրաստման եղանակով փայտանյութի վաճառքի պայմանագրեր կնքելը սահմանված չէ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ:**

**2017 թվականի ընթացքում չպահպանելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման դրույթները ընդհանուր առմամբ մթերվել է 30.111 խմ փայտանյութ:**

Նույն որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ երկրորդական անտառանյութի մթերման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է երկրորդական անտառանյութի մթերման մասին պայմանագիր: ՀՀ անտառային օրենսգրքի համաձայն՝ երկրորդական անտառանյութ է՝ մթերված կոճղ, կեղև, չորացած ճյուղ, շիվ, խեժ:

**Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 2017-2018թթ-ներին երկրորդական անտառանյութի մթերման պայմանագրեր չեն կնքվել:**

**3.3 Չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի դրույթները:** Հրամանի հավելված 1-ի 5-րդ կետի համաձայն՝ անտառահատման և անտառային տոմսերը «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվում են «Անտառտնտեսություն» մասնաճյուղերին, որոնք էլ իրենց հերթին, նույն կարգի համաձայն, լրացնում և տրամադրում են անտառօգտագործողներին:

ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անտառօգտագործողը ֆիզիկական և իրավաբանական անձն է, որն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք է ձեռք բերել օգտվելու անտառի և անտառային հողերի օգտակար հատկություններից:

Անտառահատման տոմսերի ուսումնասիրությունից պարզվեց, որ տոմսերը «Անտառտնտեսություն» մասնաճյուղի կողմից չեն տրամադրվել անտառօգտագործողներին, և որպես անտառօգտագործող նշվել են հենց «Անտառտնտեսություն» մասնաճյուղը (օրինակ՝ Արծվաբերդ մասնաճյուղի կողմից 2017 թվականի նոյեմբերի 13-ին դուրս գրված թիվ 00999 անտառահատման տոմսը՝ 59 ծառ, 252.77 խմ, Նոյեմբերյան մասնաճյուղի կողմից 2018 թվականի ապրիլի 20-ին դուրս գրված թիվ 01206 անտառահատման տոմսը՝ 424 ծառ, 1011.8 խմ), **ինչը չի բխում վերոնշյալ հրամանի պահանջներից:**

**3.4 Չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 06.05.2013թ.-ի թիվ 80-Ն հրամանով հաստատված պետական և համայնքային անտառներում**

**բնափայտի մթերման կարգի 71-րդ կետի դրույթները, որի** համաձայն, թափուկի մթերումը պետք է կատարվի համապատասխան իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 29-ի N 226-Ա և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 29-ի N 253-Ա «Ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտի մթերման և բացթողման կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ թափուկ փայտանյութի հավաքումը և տեղափոխումը իրականացվում է անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների կողմից տրված **թափուկ փայտանյութի օգտագործման տոմսի հիման վրա:**

ՀՀ անտառային օրենսգրքի հոդված 3-ի համաձայն՝ թափուկը դա անտառային հողի վրա ընկած, մահացած ծառերի մասեր կամ բներն են:

Նոյեմբերյան մասնաճյուղում ուսումնասիրությունից պարզվեց, որ 2017թ.-ին գործող անտառահատման տոմսերից 14 անտառահատման տոմսերում (2017թ.-ի ընթացքում տրամադրվել է 7 հատ), իսկ 2018թ.-ին գործող 20 անտառահատման տոմսերում (2018թ.-ի ընթացքում տրամադրվել է 11 հատ) օգտագործման տեսակը նշվել է թափուկի հավաքում:

2017թ.-ի ընթացքում 14 անտառահատման տոմսերով բնափայտի ծավալը կազմել է 10503.1 խմ: Տարվա ընթացքում բնակիչներին բաժանվել է 10340.4 խմ թափուկ: Թափուկից մթերվել և իրացվել է 1,430.4 խմ վառելափայտ, 341.9 խմ շինափայտ:

2018թ.-ի ընթացքում 20 անտառահատման տոմսերով բնափայտի ծավալը կազմել է 8572.3 խմ: Տարվա ընթացքում բնակիչներին բաժանվել է 8726 խմ թափուկ: Թափուկից մթերվել և իրացվել է 177.3 խմ շինափայտ:

Արծվաբերդ մասնաճյուղում ուսումնասիրությունից պարզվեց, որ 2017թ.-ի ընթացքում 7 հատ և 2018թ.-ի ընթացքում 3 հատ անտառահատման տոմսերում օգտագործման տեսակը նույնպես նշվել է թափուկի հավաքում:

2017թ.-ի ընթացքում տրամադրված անտառահատման տոմսերով բնափայտի ծավալը կազմել է 5770 խմ, որից՝ 135 խմ շինափայտ: Տարվա ընթացքում բնակիչներին բաժանվել է 8375 խմ թափուկ: Թափուկից մթերվել և իրացվել է 84 խմ շինափայտ:

2018թ.-ի ընթացքում տրամադրված անտառահատման տոմսերով բնափայտի ծավալը կազմել է 2220 խմ: Տարվա ընթացքում բնակիչներին տրամադրվել է 13636 խմ թափուկ: Թափուկից մթերվել և իրացվել է 155 խմ շինափայտ:

Թափուկի հավաքում նշումով գրված անտառահատման տոմսերում նշված բնափայտի մթերման ծավալերը չեն ներառվել տարեկան բնափայտի մթերման ծավալների (ինչպես նաև՝ հրամաններով սահմանված տարեկան նորմաների) մեջ:

**Նշված անտառահատման տոմսերում չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված՝ պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի 14-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթները, համաձայն** որի՝ անտառահատման տոմսում մթերված անտառանյութի բնօգտագործման վճարը բյուջե մուծելու ժամկետը սյունակում նշվում է վճարման գումարի չափը և ժամկետը: **Նշված անտառահատման տոմսերով վառելափայտի համար բնօգտագործման վճար չի հաշվարկվել: Օրինակ՝ 12.02.2018թ.-ին Արծվաբերդ մասնաճյուղի կողմից տրամադրված թիվ 01150 անտառահատման տոմսով բնօգտագործման վճար չի հաշվարկվել, սակայն նշված տոմսի շրջանակներում վաճառվել է 6խմ վառելափայտ՝ բնափայտի բացթողնման թերթիկ՝ համար 007784, հարկային հաշիվ՝ թիվ Ա 9563161745:**

Արծվաբերդ մասնաճյուղի կողմից դուրս գրված **վերը նշված անտառահատման տոմսերում չեն պահպանվել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված՝ պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները, համաձայն** որի՝ անտառահատման տոմսում հիման վրա տողում նշվում է անտառահատման տոմսի տրամադրման հիմքերը (հրաման,

պայմանագիր): Սակայն **նշված անտառահատման տոմսերում նշված է Անտառապետի զեկուցագիր, ինչը չի համապատասխանում հրամանի դրույթներին:**

**Հստակ չէ՝ դա իրականում վերը թվարկված անտառահատման տոմսերում** (օրինակ՝ Արծվաբերդ մասնաճյուղի կողմից 2017 թվականի նոյեմբերի 14-ին դուրս գրված թիվ 01146 անտառահատման տոմսը՝ 850 խմ, Նոյեմբերյան մասնաճյուղի կողմից 2018 թվականի օգոստոսի 1-ին դուրս գրված թիվ 01228 անտառահատման տոմսը՝ 174 ծառ, 186.56 խմ) **նշվածը վառելափայտ է (հատման եղանակը՝ թափուկ, օգտագործման եղանակը՝ թափուկ, հատատեղի հաշվեգնահատման ցուցակներում թվարկված են ծառեր, բների հաստությունով, տեսակով և այլն), որի իրացման դեպքում պետք է վաճառք իրականացվի, թե՝ տվյալ ծավալները իրականում թափուկ էին, որոնց համար տրամադրվել են թափուկ փայտանյութի օգտագործման տոմսեր:**

***3.5*** **Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1072-Ն որոշմամբ հաստատված՝ հատատեղերի հատկացման և տեղազննման կարգի 19-րդ կետի դրույթները, որի համաձայն՝ թերհատների շահագործումն իրականացվում է կազմակերպության որոշմամբ՝ անտառահատման տոմսի ժամկետի երկարաձգման միջոցով:**

Նոյեմբերյան մասնաճյուղում ուսումնասիրությունից պարզվեց, որ 16.01.2017թ.-ի թիվ 03 հրամանով 2016թ.-ից փոխանցված 7 անտառահատման տոմսերից 4 հատի ժամկետն է երկարաձգվել, իսկ մնացած 3 անտառահատման տոմսերի ժամկետները չեն երկարաձգվել:

**Հաշվեքննվող օբյեկտի բացատրություն.**

16.01.2017 թ-ի N-03 հրամանով հետագա որակազրկումից խուսափելու և հակահրդեհային անվտանգությունից ելնելով թերհատ մնացած 7 հատատեղերից երկարաձգվել է քամատապալ հատատեղերի անտառահատման տոմսերի ժամկետները:

**3.6 Չեն պահպանվել ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ տարածքային կառավարման նախարարների՝ 2011 թվականի նոյեմբերի**

**29-ի համատեղ հրամանի դրույթները**, որով սահմանվել է «Ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի» ցանկը:

Գուգարք մասնաճյուղում անվճար թափուկ վառելափայտի բաշխման փաստաթղթային ուսումնասիրությամբ պարզվեց, որ անտառտնտեսության կողմից 2017 և 2018 թվականներին համայնքներին անվճար բաժանված 579.8 խմ թափուկ վառելափայտից, 219.0 խմ վառելափայտը հատկացվել է Հրամանով սահմանված ցանկում չնշված համայնքներին:

Առկա է նաև անհամապատասխանություն՝ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության և վերը նշված ծավալների միջև: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Գուգարք մասնաճյուղում թափուկի ծավալը 2017թ.-ին առկա չէ, 2018 թ.-ին կազմել է 267 խմ:

**3.7 Բնափայտի իրացումը իրականացվում է ՊՈԱԿ-ի տնօրենի 25.03.2016թ. «Հայանտառ ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված անտառներից մթերված փայտանյութի վաճառքի գները հաստատելու մասին» թիվ 14 հրամանով, և ՊՈԱԿ-ի տնօրենի 23.07.2018թ թիվ 68 հրամանով հաստատված գնացուցակների հիման վրա:**

Գուգարք մասնաճյուղում բնափայտի վաճառքի հաշվետվությունների ուսումնասիրությամբ պարզվեց, որ շինափայտի վաճառքի դեպքերում հիմնականում հիմք է ընդունված սահմանված երեք տեսակների արժեքներից նվազագույնը:

Օրինակ՝ 2018թ.-ի օգոստոսի 2-ի թիվ 01064 անտառահատման տոմսի համաձայն՝ պետք է հատվեր հաճարենու 2 խմ շինափայտ, 36.29 խմ վառելափայտ, 3.83 խմ ցախ և ճյուղեր, և բոխու 2.83 խմ վառելափայտ, 0.28 խմ ցախ և ճյուղեր: Անտառահատման տոմսի համար հիմք հանդիսացող հատատեղի հաշվեգրման ցուցակում ընդգրկված 55 հատ ծառերից 48 սմ, 40 սմ, 40 սմ տրամագծով թվով 3 ծառերից, որպես շինափայտի երկարություն,՝ նշվել է համապատասխանաբար 4 մետր, 6 մետր և 5 մետր, ընդհանուր՝ 2 խմ շինափայտ ծավալով: 2018թ.-ի նոյեմբերի 14-ին դուրս գրված հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ վերոնշյալ 2 խմ

շինափայտը վաճառվել է մեկ խմ-ի արժեքը 32,300 դրամով: ՊՈԱԿ-ի տնօրենի 23.07.2018թ.-ի թիվ 68 հրամանով հաստատված գնացուցակի համաձայն՝ վերոնշյալ 32,300 դրամ արժեքը սահմանվել է 25սմ-ից ավել տրամագծով 1.2-2.2 մետր երկարություն ունեցող վերին պահեստում գտնվող հաճարենու շինափայտի համար:

Առկա է անհամապատասխանություն՝ հատատեղի հաշվեգրման ցուցակում նշված շինափայտի հատկանիշներով սահմանված 38,300 դրամ խմ-ի համար (2.2-3.2 մետր երկարություն) և հաշիվ-ապրանքագրով իրացված շինափայտի 32,300 դրամ խմ-ի համար (1.2-2.2 մետր երկարություն) արժեքների միջև:

**Հաշվեքննվող օբյեկտի բացատրություն.**

ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 897 որոշման հավելվածի VII և VIII գլուխների պահանջների սանիտարական հատումները ուղղված են տնկարկների սանիտարական վիճակի բարելավմանը և արտադրողականության բարձրացմանը: Հատումներն իրականացվում են տնկարկներում բնականորեն տապալված, ցցաչոր, քամատապալ, ծնակոտոր, ինչպես նաև վնասատուներով և հիվանդություններով վարակված, հրդեհների և այլ պատճառների հետևանքով կենսունակությունը կորցրած ծառերի հեռացմամբ: Նշված հատկանիշներով ծառերից մթերվող շինափայտը հիմնականում համապատասխանում է 3-րդ կարգի շինափայտի դասակարգման հատկանիշներին (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013թ. մայիսի 6-ի թիվ 80 հրաման, գլուխ 3՝ «Փայտանյութի որպես շիրնափայտ մթերմանը ներկայացվող պահանջները»):

Հատատեղերի հատկացման ժամանակ ծառերից մթերվող շինափայտերի երկարությունները որոշվում են աչքաչափորեն և իրենցից ներկայացնում են հաշվարկային (կանխատեսվող) ցուցանիշներ, իսկ դրանց վերջնական և ճշգրիտ ծավալները արձանագրվում են մթերման և իրացման ժամանակ, անհրաժեշտության դեպքում գնորդի և վաճառողի փոխադարձ համաձայնությամբ թույլ են տրվում կիրառել շինափայտի երկարության այլ չափեր (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2013թ. մայիսի 6-ի թիվ 80 հրաման, գլուխ 3՝ «Փայտանյութի որպես շիրնափայտ մթերմանը ներկայացվող պահանջները»):

**3.8 Առկա են անհամապատասխանություններ՝ անտառահատման տոմսերում և բնափայտի վաճառքի հաշվետվություններում նշված բնափայտի հատման և փաստացի վաճառքի քանակությունների մասով, մասնավորապես.**

Գուգարքի և Եղեգնուտի անտառտնտեսություններում ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 2017 թվականին դուրս գրված անտառահատման տոմսերում նշվել է 369.73 խմ վառելափայտի և 129.54 խմ շինափայտի հատում, մինչդեռ համաձայն ներկայացված բնափայտի վաճառքի հաշվետվությունների՝ տվյալ անտառահատման տոմսերից վառելափայտի վաճառքը կազմել է 553.79 խմ, իսկ շինափայտի վաճառքը՝ 105.93 խմ:

2018 թվականին դուրս գրված անտառհատման տոմսերում նշվել է 310.37 խմ վառելափայտի և 238 խմ շինափայտի հատում, մինչդեռ համաձայն ներկայացված բնափայտի վաճառքի հաշվետվությունների՝ տվյալ անտառահատման տոմսերից վառելափայտի վաճառքը կազմել է 418.10 խմ, իսկ շինափայտի վաճառքը՝ 236.88 խմ:

Օրինակ՝ 2018թ.-ի օգոստոսի 2-ի թիվ 01064 անտառահատման տոմսի համաձայն՝ պետք հատվեր հաճարենու 2 խմ շինափայտ, 36.29 խմ վառելափայտ, 3.83 խմ ցախ և ճյուղեր, և բոխու 2.83 խմ վառելափայտ 0.28 խմ ցախ և ճյուղեր, ընդամենը 45,2 խմ բնափայտ: Մինչդեռ ստացված տեղեկատվության համաձայն՝ տվյալ անտառահատման տոմսի շրջանակներում իրացվել է 58 խմ բնափայտ: Անտառահատման տոմսում փոփոխությունները առկա չեն:

Հաշվեննվող օբյեկտի բացատրություն.

Անտառահատման տոմսերում և բնափայտի վաճառքի հաշվետվություններում նշված տարբերությունները պայմանավորված են նրանով, որ անտառահատման տոմսերում անտառանյութի ծավալները հաշվարկվում են ծավալների հաշվարկման աղյուսակներով, որը կարող է տարբերվել մթերումից ստացված փաստացի ծավալից: Բացի այդ, մթերված փայտանյութի ծավալը չի կարող համընկնել իրացված ծավալների հետ, եթե առկա է մնացորդ անտառանյութ:

## 4 Անտառահատումների մասով այցելությունների վերաբերյալ

Շրջակա միջավայրի նախարարության «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից իրականացված հարցմանը ի պատասխան ստացվել են 2017 և 2018 թվականների հունիս-հուլիս ամիսների մասով՝ «Նոյեմբերյանի անտառտնտեսություն», «Գուգարքի անտառտնտեսություն», «Եղեգնուտի անտառտնտեսություն», «Արծվաբերդի անտառտնտեսություն» և «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղերի սպասարկման ոլորտում գտնվող անտառային հողերի արբանյակային պատկերները և արբանյակային պատկերների վերծանման արդյունքում փոփոխված տարածքների (ստացված տեղեկատվության համաձայն՝ փոփոխված տարածքները իրենցից ենթադրում են՝ հատումներ, քամատապալ/ձյունակոտոր ծառեր, հիվանդություններով ու վնասատուներով վարակված օջախներ) վերաբերյալ տեղեկատվություն:

Տրամադրված փոփոխությունները համադրվել են տվյալ մասնաճյուղերի կողմից տրամադրված անտառահատման տոմսերի հետ (քառակուսի, հատված) (Հավելվածներ 3.1, 3.2, 3.3, 3.4, 3.5, Նկար 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5):

Արծվաբերդի, Գուգարքի, Եղեգնուտի, Նոյեմբերյանի անտառտնտեսություններ ընտրանքային իրականացված այցելությունների ընթացքում պարզվեց, որ.

Արծվաբերդ Մասնաճյուղ. Ընտրված հատվածներում կատարված այցելություններից պարզվեց, որ «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փոփոխությունները պայմանավորված են.

- Արծվաբերդի անտառպետության 23 քառակուսու 3 հատվածում առկա են հատված ծառեր, որոնք հաշվառված չեն եղել՝ որպես ապօրինի հատված ծառեր (Նկար 1),
- Արծվաբերդի անտառպետության 28 քառակուսու 5 և 7 հատվածներում և 22 քառակուսու 10 հատվածում առկա էին բազմաթիվ հատումներ (Նկար 2),
- Նորաշենի անտառպետության 14 քառակուսու 18 հատվածում ծառը արմատախիլ էր արված, տեղում փոսակն էր մնացել: 6 քառակուսու 23 հատվածում

առկա են հատված ծառեր, որոնք հաշվառված չեն եղել՝ որպես ապօրինի հատված ծառեր (Նկար 3),

Ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից կազմված՝ 11-ը դեկտեմբերի 2017թ.-ի թիվ 09 և 22-ը սեպտեմբերի 2020թ.-ի թիվ 4 ստուգման ակտերի համաձայն՝ Արծվաբերդի անտառտնտեսությունում արձանագրվել է համապատասխանաբար 4092 ծառեր, որի հետևանքով բնությանը պատճառվել է 428,667.0 հազ.դրամի վնաս, և 556 ծառ՝ 64,595.7 հազ.դրամի վնաս:

Արծվաբերդի անտառտնտեսության մասնաճյուղի տնօրենի կողմից Հայանտառ ՊՈԱԿ-ին ուղղված 06.04.2018 թվականի գրության համաձայն, սկսած 2014թ.-ից Նորաշենի անտառպետության թիվ 6-րդ, Արծվաբերդի անտառպետության թիվ 5-րդ պահաբաժիններում տեղակայված մարտական հենակետերի շրջակայքում կատարվել են և մինչև օրս կատարվում են ապօրինի համատարած հատումներ՝ Ճամբարակի ուղղությամբ: 2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին ՀՀ բնապահպանության նախարարության, բնապահպանության և ընդերքի տեսչության կողմից արձանագրված են 1580 ապօրինի հատված ծառերից հետո հատումները նոր թափ են ստացել, կառուցվել և կառուցվում են նոր ճանապարհներ՝ անտառը ամբողջությամբ վերացնելու համար: Նշված ծառերի քանակը հատված տարածքների մի փոքր մասն է կազմում: Պահախմբի աշխատակիցները, վտանգելով իրենց կյանքը, սահմանի կողմից շրջանցելով զինվորական հենակետը, մտել են տարածք, և 61 հատ թարմ ապօրինի հատված ծառի արձանագրություն կազմել անհայտով, ուղարկել ոստիկանության Տավուշի բաժին: Ինչպես նախկինում տեղեկացրել են, տարածքը, որտեղ կատարվում են ապօրինի ծառահատումները, Բերդից հեռու է մոտ 60կմ, և այնտեղ վերահսկողություն իրականացնելն անհնարին է, քանի որ աշխատակիցներին չեն թույլատրում մտնել տարածք:

<u>Գուգարք, Եղեգնուտի մասնաճյուղ</u>՝ «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փոփոխությունները պայմանավորված են.

- Եղեգնուտի անտառպետության 22 քառակուսու 3 հատվածում առկա էին բազմաթիվ ծառահատումներ, որոնցից մի մասն էր հաշվառված՝ որպես ապօրինի ծառահատում (Նկար 4),
- Եղեգնուտի անտառպետության 30 քառակուսու 13 հատվածում առկա են հատված ծառեր, որոնք հաշվառված չեն եղել՝ որպես ապօրինի հատված ծառեր (Նկար 5),
- Վահագնի անտառպետության 10 քառակուսու 9 և 13 հատվածներում առկա են հատված ծառեր, որոնք հաշվառված չեն եղել՝ որպես ապօրինի հատված ծառեր (Նկար 6):

## 5 Անտառային հողերի վարձակալության դիմաց ստացված վարձավճարներ

5.1 Ստացված տեղեկատվության համաձայն՝ սերվիտուտի պայմանագրերով նախատեսված հողերի ընդհանուր չափը կազմել է 0.76293 հա, նախատեսված տարեկան վճարը կազմել է 152.4 հազ դրամ:

**Ուսումնասիրությամբ պարզվեց, որ ՀՀ օրենսդրությամբ պետական անտառային հողերը սերվիտուտով տրամադրելու նվազագույն վճար սահմանված չէ: Տվյալ իրավակարգավորման բացակայության պայմաններում ՊՈԱԿ-ի կողմից սերվիտուտով տրամադրվել է 0.76293 հա անտառային հող՝ 1 քմ-ի համար սահմանելով 19.9 ՀՀ դրամ տարեկան վճար:**

5.2 Վարձակալությամբ հանձնված հողերի չափը կազմում է 0.5 հա, իսկ տարեկան վարձավճարը՝ 274.6 հազ դրամ:

Վարձակալության պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 03.06.2010թ. «Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը հաստատելու մասին» թիվ 668-Ն որոշման հավելվածով նախատեսված նվազագույն գներով, իսկ Զավեն Նազլուխանյանի հետ կնքված վարձակալության պայմանագիրը, որով վերջինիս, վարչական շենքի սպասարկման նպատակով, տրամադրվել է 0.1 հա անտառային հող՝ կնքվել է տարեկան 9.0 հազ. դրամով:

**Վերոնշյալ որոշման ուսումնասիրությունից պարզվեց, որ վարչական շենքի սպասարկման նպատակով անտառային հողի տրամադրման վարձավճարի տարեկան նվազագույն չափ սահմանված չէ, ուստի՝ վերոնշյալ պայմանագիրը կնքվել է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված վարձավճարի նվազագույն չափից տարբերվող գնով:**

5.3 ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ հայտատուները հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառների կամ անտառային հողերի վարձակալության իրավունք ստանալու համար հայտի հետ միասին լիազորված մարմին են ներկայացնում անտառօգտագործման ծրագիր, որը ի թիվս այլ տեղեկատվության ներառում է նաև ներդրումների չափը և ժամանակացույցը:

**Հաշվեքննության ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաթեթների ուսումնասիրությամբ պարզվեց, որ «Սելևկիա» ՍՊԸ-ի հայտերին կից ներկայացված ներդրումային ծրագրերում չի նշվել ներդրումների ժամանակացույցը, սակայն վերջիններիս հետ կնքվել են վարձակալության պայմանագրեր, ինչը չի բխում վերոնշյալ որոշման պահանջներից:**

5.4 Հրազդանի անտառտնտեսություն մասնաճյուղում ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Հայանտառ ՊՈԱԿ-ի և Արմեն Սարգսյանի միջև 2018 թվականի նոյեմբերի 31-ին կնքված պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ անտառային հողը տրամադրվել է վարձակալության հանգստի և զբոսաշրջության նպատակով: Նույն պայմանագրի 3.4.7 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է անտառային հողը օգտագործել իր կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագրին և ժամանակացույցին համապատասխան, դրանց իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն:

Ըստ ներկայացված ներդրումային ծրագրի առաջարկվել է նախատեսվող տարածքում տեղակայել «Ջիփ Լայն»–ի ճոպանի ամրացման ժամանակավոր կայան: Նախատեսվել է ներդնել մոտ 10,000.0 հազ. դրամ, բարեկարգել վարձակալված տարածքը և պահպանել նրա կանաչ ծածկույթը: Ըստ ներկայացված

կառուցման աշխատանքների ժամանակացույցի՝ աշխատանքները պետք է կատարվեն 12 ամսում:

**Ստացված տեղեկատվության համաձայն՝ չեն ներկայացվել պայմանագրով նախատեսված տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև՝ 2020 թվականի սեպտեմբեր ամսին անտառապետի այցելության ժամանակ աշխատանքներ կատարված չեն եղել:**

Հայանտառ ՊՈԱԿ-ի և ՍԵԼԵՎԿԻԱ ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 31-ին կնքվել է թվով երկու վարձակալության պայմանագիր, մեկը՝ Հրազդանի անտառտնտեսության մասնաճյուղի Արզականի անտառպետության 15-րդ քառակուսու 2-րդ տեղամաս անատառային հողում, մյուսը՝ Արզականի անտառպետության 15-րդ քառակուսու 25-րդ տեղամասի անտառային հողում: Կնքված պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ անտառային հողը տրամադրվել է վարձակալության հանգստի կազմակերպման նպատակով: Պայմանագրի 3.4.7 կետի համաձայն՝ վարձակալը պարտավոր է անտառային հողը օգտագործել իր կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագրին և ժամանակացույցին համապատասխան, դրանց իրականացման վերաբերյալ տարեկան մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն:

Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ առաջարկվող ծրագրի էությունը կայացել է նրանում, որ առաջին իջևանակետը նպատակահարմար է տեղակայել պանսիոնատի սահմաններից մոտավորապես 1000 մետր հեռավորության վրա: Ըստ չափագրության՝ այն զբաղեցնելու է 0.05 հա մակերեսով տարածք: Նախատեսվող իջևանակետը հնարավորություն կտա բարձրացողներին կայանելու, հանգստանալու և սնվելու համար: Մինչ հայտ ներկայացնելը վերանորոգվել է պանսիոնատի շենք-շինությունների գրեթե ութսուն տոկոսը, բարեկարգվել է պանսիոնատի ամբողջ տարածքը: Իրականացված աշխատանքների համար մինչ օրս ներդրվել է գրեթե 400,000,000 ՀՀ դրամ, իսկ առաջիկայում նախատեսվում է ներդնել մոտ 500,000,000 ՀՀ դրամ ևս: Պանսիոնատի ամբողջ տարածքում իրականացվելու է նաև գեղազարդիչ ծառատեսակների տնկման լայնածավալ աշխատանքներ՝ ապահովելով ոռոգման ցանցով:

**Ստացված տեղեկատվության համաձայն՝ չեն ներկայացվել պայմանագրով նախատեսված տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև՝ 2020 թվականի հոկտեմբեր ամսին անտառապետի այցելության ժամանակ աշխատանքներ կատարված չեն եղել:**

**6 <u>Ծախսերի վերաբերյալ</u>**

6.1 Հաշվեքննության ընթացքում ՊՈԱԿ-ի աշխատակիցների 2017 և 2018 թվականներին ՀՀ տարածքից դուրս գտնվելու և աշխատաժամերի հաշվարկների ուսումնասիրության շրջանակներում, եկամտային հարկի հաշվետվություններում ներառված անձանց մասով, արտաքին հաստատում է իրականացվել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը:

Ստացված տեղեկատվությունը համադրվել է աշխատաժամերի հաշվարկների և եկամտային հարկի հաշվետվություններում առկա տեղեկատվության հետ, որի արդյունքում պարզվեց, որ **վերահսկվող ժամանակահատվածում 83 աշխատակից ընհանուր 2022 աշխատանքային օր գտնվել են ՀՀ տարածքից դուրս, սակայն աշխատաժամերի հաշվարկման տեղեկագրերում իրականացվել է բացակայած օրերի համար աշխատաժամերի հաշվարկ, առանց համապատասխան փաստաթղթային հիմնավորումների, որի համար վճարվել է 9,216.2 հազ. դրամ:**

6.2 ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արծվաբերդի անտառտնտեսություն մասնաճյուղի և նույն մասնաճյուղի անտառապետերի, անտառապահների և ինժեներների միջև կնքվել են պայմանագրեր, որոնցով սահմանվել է, որ վերջիններս պարտավորվում են անհրաժեշտության դեպքում՝ իրենց աշխատանքային ժամից դուրս 2 ժամ կատարել հատատետեղերի հատկացման աշխատանքներ, իսկ մասնաճյուղը պարտավորվել է կատարված աշխատանքի յուրաքանչյուր հա-ի դիմաց վճարել 1500 դրամ:

Մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը պայմանագրերը կնքել է՝ որպես Պատվիրատու, մինչդեռ պայմանագրերի վերնագիրը նշվել է աշխատանքային պայմանագիր, իսկ պայմանագրում, որպես կողմեր, հանդես են գալիս գործատուն և աշխատողը:

**Վերոնշյալ պայմանագրերից պարզ չէ, թե դրանք աշխատանքային պայմանագրեր են, թե՝ կապալի: Միևնույն ժամանակ, հատատեղերի**

**հատկացման աշխատանքները սահմանված են անտառապետերի աշխատանքի ընդունելու մասին հրամաններում:**

6.3 Ստացված տեղեկատվության համաձայն՝ անտառվերականգնման, անտառապատման աշխատանքների իրականացման համար Գուգարք մասնաճյուղը դրամական միջոցներ է ստացել ՊՈԱԿ-ից՝ 2017 թվականին 2,033.4 հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 10,716.68 հազ դրամ, Թեղուտ ՓԲԸ-ի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում՝ 2017 թվականին 38,377.8 հազ. դրամ, իսկ 2018թ.՝ 19,613.4 հազ դրամ:

Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար աշխատանքի են ընդունվում սեզոնային բանվորներ:

ՊՈԱԿ-ի տնօրենի հրամաններով՝ ՊՈԱԿ-ի տնօրենի 07.04.2018թ. թիվ 32 հրաման, Թեղուտի ծրագրի մասով՝ ՊՈԱԿ-ի տնօրենի 11.04.2017թ. թիվ 27 հրաման, ըստ ծրագրերի սահմանվում են տեխնոլոգիական քարտեր, որտեղ նշվում են իրականացվելիք աշխատանքների մասով նորմաներ, վարձատրության կոնկրետ չափեր և այլն:

Սեզոնային բանվորներին աշխատանքների դիմաց կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ նույն աշխատանքի համար տարբեր ծրագրերով վճարվել են իրարից տարբերվող գումարներ: Օրինակ.

- «հողի հետլցում խրամատներում» աշխատանքի համար Թեղուտի ծրագրով 1 հեկտարի հաշվարկով 3000 գծամետրի համար վճարվել է 20.0 հազ.դրամ, մինչդեռ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված միջոցներով կատարված աշխատանքների մասով վճարվել է 43.5 հազ. դրամ (տվյալ աշխատանքների մասով տարբերությունը կազմում է 1,454.65 հազ. դրամ)
- «խրամատի փորում ձեռքով» աշխատանքի համար Թեղուտի ծրագրով 3000 գծամետրի համար վճարվել է 171.4 հազ. դրամ, մինչդեռ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված միջոցներով կատարված աշխատանքների մասով միևնույն աշխատանքի համար 3000 գծամետրի հաշվարկով վճարվել է 316.4 հազ. դրամ (տվյալ աշխատանքների մասով տարբերությունը կազմում է 8,975.5 հազ. դրամ):

**Վերոնշյալ անհամապատասխանությունների պատճառը հանդիսացել է տեխնոլոգիական քարտերով սահմանված մեկ նորմայի համար տարբեր արժեքների կիրառումը (Թեղուտի ծրագրով՝ 2.0 հազ. դրամ, ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված միջոցներով՝ 5.8 հազ. դրամ):**

**Թեղուտի ծրագրի մասով՝ ՊՈԱԿ-ի տնօրենի 11.04.2017թ. թիվ 27 հրամանի կայացման համար հիմք է հանդիսացել 2012 թվականի հուլիսի 27-ի թիվ 120727 պայմանագիրը, որով սահմանվել է աշխատանքների կատարման ժամանակացույց՝ մինչև 2015 թվականը: Պայմանագրի ժամկետի երկարաձգումը հիմնավորող փաստաթուղթ առկա չէ:**

6.4 2017-2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի 2.4.7 կետի համաձայն՝ ՊՈԱԿ-ը պարտավոր է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան: **Մինչդեռ Հայանտառ ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018 թվականներին առանց նշված ընթացակարգը պահպանելու իրականացվել է թվով 1030 ձեռքբերում՝ 227,642.5 հազ. դրամի չափով, որի դիմաց վճարվել է 198,493.2 հազ. դրամ:**

***Հաշվեքննվող օբյեկտի առարկություն.***

2017-2018 թվականներին դրամաշնորհի ձևով տրամադրված միջոցներն ուղղվել են աշխատավարձի ֆոնդի համալրմանը և դրամաշնորհի պայմանագրից բխող ԱԱՀ գծով պարտավորությունների մարմանը, որը չի ենթադրում Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի կիրարկում:

Ինչ վերաբերվում է 6.4 կետում նշված ձեռքբերումներին, ապա դրանք կատարվել են ՊՈԱԿ-ի արտաբյուջետային միջոցների հաշվին:

***Հաշվեքննող խմբի արձագանք.***

2017-2018 թվականներին կնքված դրամաշնորհի պայմանագրերի 2.4.7 կետը հստակ սահմանում է, որ ՊՈԱԿ-ը պարտավոր է **ծրագրի իրականացման** համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան: Նույն

պայմանագրերի հավելված 1-ով սահմանված է, որ ծրագրի նպատակը՝ ՀՀ անտառների պահպանման աշխատանքների կատարման ապահովումն է: Հետևաբար՝ ըստ դրամաշնորհի պայմանագրերի, անտառների պահպանության աշխատանքների ապահովման հետ կապված բոլոր ձեռքբերումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

6.5 2017թ.-ից Հրազդան մասնաճյուղում առկա են 4 հատ բենզասղոց՝ 856.6 հազ. դրամ արժեքով, և 3 հատ բենզասղոց՝ 428.4 հազ. դրամ արժեքով, սակայն 2018թ.-ի ընթացքում կնքվել են 10 հատ բենզասղոցների վարձակալության 10 պայմանագրեր (4 պայմանագիր՝ 140.0 հազ. դրամ, և 6 պայմանագիր՝ 190.0 հազ. դրամ արժեոներով) սեզոնային աշխատակիցների հետ կոճղաշիվային աշխատանքների կատարման համար՝ 5.0 հազ. դրամ օրավարձով: Կնքված բենզասղոցների վարձակալության պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է 1,700.0 հազ. դրամ:

**Ինչպես երևում է վերը նշվածից, բենզասղոցները մասնաճյուղում առկա լինելու և դրանց օգտագործման համար վառելիքի ծախսի բացակայության պարագայում, կնքվում են վարձակալության պայմանագրեր:**

6.6 Նոյեմբերյանի անտառտնտեսություն մասնաճյուղում ուսումնասիրությամբ պարզվեց, որ 2017թ. օգոստոսի 15-ի ՊՈԱԿ-ի և Աշոտ Հակոբյան ԱՁ-ի միջև և 2018 ապրիլի 16-ի ՊՈԱԿ-ի և Գրիգոր Գրիգորյան ԱՁ-ի միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ մասնաճյուղի համար ձեռք են բերվել համապատասխանաբար 750.0 հազ. դրամ և 2,200.0 հազ. դրամ արժողությամբ ժապավենային սղոցներ:

Գրիգոր Գրիգորյան ԱՁ-ից ձեռք բերված ժապավենային սղոցները, ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի, պետք է մատակարարեր 13.07.2018թ.-ին, սակայն մատակարարվել է 2018 թվականի հոկտեմբերի 5-ին: ՊՈԱԿ-ի կողմից մատակարարման 83 օր ուշացման համար տույժ չի հաշվարկվել, որը կազմում է 277.2 հազ. դրամ:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ արտադրամասերում խոշոր տրամաչափի գերանները կիսվել են, քանի որ ժապավենային սղոցը 0.78 մ տրամագծից ավել տրամագիծ ունեցող գերանները չի կարող սղոցել: Այնինչ

մասնաճյուղին տրամադրված ժապավենային սղոցների տեխնիկական բնութագրերի համաձայն՝ մշակվող գերանի տրամագիծը նախատեսվել է 2017թ.-ին ձեռք բերվածի համար 1.1 մ և 2018թ.-ին՝ 0.9 մ: **Հետևաբար՝ տեխնիկական բնաթագրերով նախատեսված տրամագծերով գերանները հնարավոր չէ մշակել մատակարարված սղոցներով:**

**Գրիգոր Գրիգորյան ԱՁ-ի կողմից մատակարարված ժապավենային սղոցը չի օգտագործվել վերամբարձ սարքավորման բացակայության պատճառով:** Իսկ Աշոտ Հակոբյան ԱՁ-ից ձեռք բերված սղոցի տեղադրման, օժանդակ շինություն կառուցելու և տերֆերի (վերամբարձ սարքավորում) համար անհրաժեշտ նյութերը ձեռք են բերվել 2017թ. օգոստոսի 1-ին և 2017թ.-ի օգոստոսի 31-ին Սեդրակ Բաղինյանի հետ կնքված համապատասխանաբար 971.1 հազ. դրամի և 507.7 հազ. դրամ արժեքով պայմանագրերի:

## 7 Գույքի անվանացանկի վերաբերյալ

Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 և 2018թթ.-ին ՊՈԱԿ-ում կատարվել է տարեկան գույքագրում՝ համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի 05.12.2017թ.-ի թիվ 85 և 27.11.18 թ.-ի թիվ 108 հրամանների:

7.1 Նոյեմբերյան մասնաճյուղի գույքի ցանկում առկա է եղել 2000 լիտրանոց բակ, մինչդեռ տվյալ բակը, հիմք ընդունելով 19.01.2017 թվականի մասնաճյուղի տնօրենին ուղղված դիմումը, 20.7 հազ. դրամ մնացորդային արժեքով վաճառվել է մասնաճյուղի աշխատակցին:

***Արդյունքում՝ 2 տոննա տարողությամբ տարան վաճառվել է մասնաճյուղի կողմից: Սակայն վաճառելուց հետո տարան դեռևս գտնվում է մասնաճյուղի հաշվեկշռում:***

7.2 Հրազդան մասնաճյուղի գույքի անվանացանկում առկա չէ ՑՆ 400 տեսակի պոմպ, սակայն 2018թ.-ի սեպտեմբեր ամսին Հրազդան մասնաճյուղը Սինխրոն ՍՊԸ-ին միայն հարկային հաշիվների հիման վրա վճարել է 913.2 հազ. դրամ՝ տվյալ պոմպի հիմնանորոգման համար: **Պարզ չէ, թե ում է պատկանում պոմպը, քանի որ Հրազդան մասնաճյուղի գույքացանկում այդպիսի պոմպ առկա չէ: Գույքացանկում առկա է միայն պոմպակայանը, որտեղ, ըստ ստացված**

**<u>տեղեկատվության, գտնվում է վերը նշված պոմպը: Մասնաճյուղում առկա չէր պոմպակայանի սեփականության վկայականը:</u>**

**<u>05.10.2017թ.-ին կազմված դուրս գրման ենթակա հիմնական միջոցների ցանկում ընդգրկված գ. Ջրվեժում գտնվող լաբորատոր շենքի և գ. Առինջում ջրամբարի սեփականության վկայականները նույնպես առկա չեն եղել:</u>**

7.3 Արծվաբերդ մասնաճյուղի փաստաթղթային ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ մասնաճյուղի հիմնական միջոցների ցանկում շարժական միջոցները 4 են՝ ՈՒԱԶ 469 229 SV 64, ՈՒԱԶ 909 LL 01, անտառտնտեսական տրակտոր 79-42 TL և ՈՒՌԱԼ 672 OL 64: Նշված շարժական միջոցներց ՈՒԱԶ 469 մեքենան 1,919.1 հազ. դրամ արժեքով (229 SV 64 պետհամարանիշով) գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, մեքենայի փաստաթղթերը բացակայում են: Մասնաճյուղի ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա չեն նաև բենզակուլտիվատորը՝ 760.0 հազ. դրամ, մեկ դյուրակիր համակարգիչը՝ 350.0 հազ. դրամ, բնափայտի խոնավաչափը՝ 113.4 հազ. դրամ, PDA/GPS 520.3՝ հազ. դրամ, տախտակ՝ 9.24խմ, 479.1 հազ. դրամ, և զգեստի կախիչ՝ 62.0 հազ. դրամ արժեքներով: Տվյալ գույքերի բացակայության փաստով Արծվաբերդի մասնաճյուղը 26.05.2020թ.-ին դիմել է ոստիկանություն, որով վնասի չափը գնահատվել է 4,200.9 հազ. դրամ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը և ''Հայանտառ'' ՊՈԱԿ-ին**

1. Դրամաշնորհի պայմնագրերով, որպես ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշ հստակ սահմանել, որ սահմանված թիվը վերաբերում է անտառխախտման հայտնաբերման դեպքում կազմված արձանագրությունների թվին:

**’’Հայանտառ’’ ՊՈԱԿ-ին**

2. Ձեռնարկել միջոցներ 2018թ.-ի հունվարի 23-ին բնապահպանության նախարարության, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակ (երկուսը միասին հանդես են եկել որպես Նվիրաբերող) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (նվիրաբերությունը ստացող), ինչպես նաև 2018թ.-ի հոկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքները իրականացնել ամբողջ ծավալով և սահմանված ժամկետներում:
3. Ձեռնարկել միջոցներ անտառաշինական նախագծերի ընդունման ուղղությամբ, իսկ դրանց բացակայության պարագայում հատման գծով բնափայտի մթերման տարեկան նորմայի հաստատման համար իրականացվող մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունները և եզրակացությունները իրականացնել ՀՀ կառավարության 17.09.2015թ.-ի թիվ 1072 որոշմամբ հաստատված ժամկետներում և իրատեսական ծավալներով, հնարավորինս նվազեցնելով տարվա ընթացքում հաստատված նորմաների զգալի փոփոխությունների անհրաժեշտությունը:
4. Ձեռնարկել միջոցներ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին թիվ 806-Ն որոշմամբ հաստատված հավելվածի դրույթները պահպանելու ուղղությամբ:
5. Ձեռնարկել միջոցներ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 142-Ն հրամանով հաստատված պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգի դրույթները պահպանելու ուղղությամբ:
6. Ձեռնարկել միջոցներ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 06.05.2013թ.-ի թիվ 80-Ն հրամանով հաստատված պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերման կարգի 71-րդ կետի դրույթները պահպանելու ուղղությամբ:
7. Ձեռնարկել միջոցներ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1072-Ն որոշմամբ հաստատված՝ հատատեղերի հատկացման և տեղազննման կարգի 19-րդ կետի դրույթները պահպանելու ուղղությամբ:
8. Ձեռնարկել միջոցներ ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ տարածքային կառավարման նախարարների՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի համատեղ հրամանի դրույթները պահպանելու ուղղությամբ:

9. Ձեռնարկել միջոցներ ընթացիկ եզրակացության հավելված 3.1, 3.2, 3.3, 3.4, 3.5 նշված 2017 և 2018 թվականների հունիս-հուլիս ամիսների փոփոխված տարածքների մասով ուսումնասիրություններ իրականացնելու ուղղությամբ և ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավական գործընթացը:
10. Ձեռնարկել միջոցներ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման հավելվածի 27-րդ կետի դրույթները պահպանելու ուղղությամբ, մասնավորապես հայտատուների ներկայացված ծրագրերում ներդրումների չափը և ժամանակացույցը ներառելու, ինչպես նաև դրանց իրականացման աշխատանքների պատշաճ իրականացման ուղղությամբ:
11. Վերահսկվող ժամանակահատվածում առանց համապատասխան փաստաթղթային հիմնավորումների 83 աշխատակիցներին վճարված 9,216.2 հազ. դրամի մասով ձեռնարկել միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
12. Ձեռնարկել միջոցներ աշխատանքային պայմանագրերում ներառված պարտականությունների մասով լրացուցիչ աշխատանքային պայմանագրեր կնքելը բացառելու ուղղությամբ, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերը կազմել պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:
13. Ձեռնարկել միջոցներ անտառվերականգնման, անտառապատման աշխատանքների իրականացման համար կիրառվող տեխնոլոգիական քարտերում սահմանված մեկ նորմայի համար միևնույն արժեքների կիրառման ուղղությամբ:
14. Հայանտառ ՊՈԱԿ-ի կողմից, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել բացառապես պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները:
15. Ձեռնարկել միջոցներ ձեռք բերված սարքավորումների (ժապավենային սղոցներ) շահագործումը ապահովելու ուղղությամբ:
16. Ապահովել Հայանտառ ՊՈԱԿ-ի տնօրենի 05.12.2017թ.-ի թիվ 85 և 27.11.18 թ.-ի թիվ 108 հրամանների համաձայն իրականացված գույքագրման ցանկերի ամբողջականությունը և ճշգրտությունը:

***Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:***